



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԸՆՏՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԺՈՂՈՎ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի ութերորդ մասի 15-րդ ենթակետի, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) կանոնադրության 17.3-րդ կետի 27-րդ ենթակետի, ինչպես նաև Պալատի նախագահի 03.06.2016թ. թիվ 173-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված «Մարզերում համակարգում իրականացնելու մասին» կարգի 4.1 կետի պահանջներով,

հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում մարզային համակարգողի ընտրության կապակցությամբ փաստաբանների ժողով (մարզի փաստաբանների համատեղ հավաք) հրավիրելու անհրաժեշտությունը,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. **2016 թվականի հուլիսի 9-ին** Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համակարգողի ընտրության համար անցկացնել Արմավիրի մարզի փաստաբանների ժողով (**այսուհետ՝ ժողով**):

2. Սահմանել, որ՝

2.1. **թեկնածուների ինքնաառաջադրումը սկսվում է 2016 թվականի հունիսի 15-ից (սույն որոշման հրապարակման օրվանից) և ավարտվում է 2016 թվականի հունիսի 23-ին ժամը 18.00-ին.**

2.2. **թեկնածուների համակարգչային հմտությունների ստուգման և գրանցման աշխատանքները կատարվում են մինչև 2016 թվականի հունիսի 28-ը (ներառյալ).**

2.3. **քարոզչությունը սկսվում է 2016 թվականի հուլիսի 1-ից և ավարտվում է 2016 թվականի հուլիսի 7-ին.**

2.4. **2016 թվականի հուլիսի 8-ը համարվում է լռության օր.**

2.5. **ժողովի քվեարկությունը սկսվում է 2016 թվականի հուլիսի 9-ին ժամը 11:00-ից և ավարտվում է նույն օրը՝ ժամը 17:00-ին:**

3. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝

- իրազեկել Արմավիրի մարզի փաստաբաններին Պալատի ցուցակում գրանցված էլեկտրոնային փոստով ծանուցումն ուղարկելու և Պալատի վարչական շենքում (ք. Երևան, Զաքիյան փողոց 2, 4-րդ

15 հունիսի 2016թ.

թիվ 194-Լ

հարկ) գտնվող համապատասխան ցուցատախտակի վրա հայտարարությունը փակցնելու միջոցով:

- սույն որոշման մասին իրազեկել մարզային խնդիրների համակարգման գծով Պալատի նախագահի տեղակալին.
- մարզային հաշվիչ հանձնաժողովին ապահովել անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներով:

4. Հաստատել Արմավիրի մարզի փաստաբանների համատեղ հավաքի ծանուցման ձևը՝ համաձայն հավելվածի:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահ՝

Արա Զոհրաբյան

15 հունիսի 2016թ.

թիվ 194-Լ

ք. Երևան



Հավելված
«Հաստատարանների պալատի նախագահի
15.06.2016թ. թիվ 194-Լ որոշման

ԾԱՆՈՒՑՈՒՄ

**Արմավիրի մարզում մարզային համակարգողի ընտրության համար
փաստաբանների ժողով հրավիրելու մասին**

ք. Երևան, Զաքիյան 2

15.06.2016թ.

Հարգելի փաստաբաններ,

Սույնով Դուք ծանուցվում եք այն մասին, որ 2016 թվականի հուլիսի 9-ին Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (այսուհետ՝ Պալատ) դահլիճում (հասցեն՝ ք.Երևան, Զաքիյան 2, 4-րդ հարկ, մեծ դահլիճ) Արմավիրի մարզի մարզային համակարգողի ընտրության կապակցությամբ հրավիրվելու է Արմավիրի մարզի փաստաբանների ժողով (մարզի փաստաբանների համարեղ հավաք, այսուհետ՝ ժողով):

1. Քվեարկությունը սկսվում է 2016 թվականի հուլիսի 9-ին, ժամը 11:00-ին և ավարտվում է նույն օրը՝ ժամը 17:00-ին:

2. Յուրաքանչյուր մարզի համար մարզային համակարգողի թեկնածուների ինքնաառաջադրումը սկսվում է 2016 թվականի հունիսի 15-ից և ավարտվում է 2016 թվականի հունիսի 23-ին, ժամը 18:00-ին:

3. Քարոզչությունը սկսվում է 2016 թվականի հուլիսի 1-ից (ներառյալ) և ավարտվում է 2016 թվականի հուլիսի 7-ին:

4. Յուրաքանչյուր մարզի փաստաբան քվեարկությանը պետք է մասնակցի անձամբ:

5. Քվեարկության օրը պետք է ներկայանալ անձը հաստատող փաստաթղթով կամ փաստաբանի վկայականով:

6. Քվեարկության գաղտնիությունը ընտրող փաստաբանի համար ոչ միայն իրավունք է, այլև պարտականություն:

Ինքնաառաջադրման վերաբերյալ դիմումը (**«Մարզերում համակարգում
իրականացնելու մասին» կարգի** 5.5 կետում նշված բովանդակությամբ) պետք է ներկայացվի ք.Երևան, Զաքիյան 2 հասցեով՝ մարզային հաշվիչ հանձնաժողովին:

«Մարզերում համակարգում իրականացնելու մասին» կարգը և անհրաժեշտ այլ տեղեկությունները կարող եք ներբեռնել Պալատի www.advocates.am կայքէջից:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
աշխատակազմի ղեկավար